ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 ՀՈՒԼԻՍԻ 2026թվականի N 166 Ա

ԱՇՈՏ ԿԱԶՄԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ, ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՌԱՆՁԻՆ՝ ԵՐԿՈՒ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 97-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման 33-րդ կետը, Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագրերը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող քաղաքացի Աշոտ Կազմիկի Հակոբյանի (ընտանիքի գլխավորը) և նրա ընտանիքի անդամներ՝ Ալինա Վոլոդյայի Հակոբյանի (կինը) և Հարություն Աշոտի Հակոբյանի (որդին) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման անշարժ գույքը (կադաստրային ծածկագիր՝ 10-031-0013-0022) բաժանել երկու՝ ստորև ներկայացված տվյալներով միավորների և կատարել պետական գրանցում.

1)կադաստրային ծածկագիր՝ 10-031-0013- , մակերեսը՝ 0.01181հա,

2)կադաստրային ծածկագիր՝ 10-031-0013- , մակերեսը՝ 0.06111հա:

2. 0.01181հա մակերեսով անշարժ գույքին տրամադրել Եղեգիս համայնք, Հորս գյուղ, 14-րդ փողոց, թիվ 14/1 հասցեն:

3. 0.06111հա մակերեսով անշարժ գույքին տրամադրել Եղեգիս համայնք, Հորս գյուղ, 14-րդ փողոց, թիվ 14 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2026 թ. հուլիսի 1 ք. Եղեգիս